ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՁԻ ՀՈԳԵՎՈՐ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԿԱՐԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ

Մշակութաբանությունը՝ որպես ֆունդամենտալ գիտություն, գիտական գիտելիքների բնագավառների ամբողջություն է՝ **կոնցեպտուալ-տեսական, պատմական** և **կիրառական**: Հենց նրանց տարբերակման գործընթացը վկայում է մշակութաբանության՝ որպես գիտության զարգացման մասին: Այսօր այն տեղի է ունենում առավել արդյունավետ: Հավանաբար դրանում ոչ պակաս դեր են խաղում ժամանակակից դարաշրջանի պահանջմունքները, հետազոտողների հետաքրքրությունները, պրակտիկ ձգտումները:

Ցավոք, տվյալ շղթայի թույլ օղակներից է մշակութաբանական գիտության **ֆունդամենտալ-տեսական** և **կիրառական** ուղղությունների կապակցվածությունը: Նրանց միջև իրական փոխկապակցվածության ապահովումը մշակութաբանության՝ որպես գիտական և կրթական դիսցիպլինի, համախմբման կարևոր ցուցանիշն է և կիրառական հետազոտությունների իրոք հիմնավոր արդյունքների նվաճման անհրաժեշտ պայման: Ստեղծվել է մի իրադրություն, երբ կիրառական հետազոտությունների ասպեկտը ընդլայնվելով հույժ սահմանափակում է նրա տեսական-մեթոդաբանական ուսումնասիրության հիմքը: Ի.Մ.Բիխովսկայան ճիշտ է նկատում, որ «...չնայած կիրառական մշակութաբանության առանձնահատկությունը որոշվում է հենց պրակտիկ նշանակությամբ պրոբլեմների լուծման կողմնորոշումով, սակայն առանց սոցիալական գործունեության ադեկվատ ելակետային տեսական մոդելի, որը ենթակա է ուսումնասիրման, դժվար թե կարելի լինի հուսալ գիտականորեն իմաստավորված և սոցիալապես արդյունավետ արդյունք»[1]:

Հենց տվյալ հիմնախնդրի խիստ արդիականության գիտակցումը դարձավ հոդվածի պատրաստման գլխավոր խթան:

Ինչպես նշեցինք, մշակութաբանական գիտության բաղկացուցիչ մասերից է **կիրառական մշակութաբանությունը**: Եվ այսօր, բնական է, մշակութա-

---

[1] Культурология: фундаментальные основания прикладных исследований (под. ред. И.М.Быховской), М., 2010, стр. 6.

բանության ընթացքի կարևոր ուղղություններից պետք է դառնա մասշտաբային **կիրառական հետազոտությունների անցկացումը՝** կապված առավելապես սոցիալ-մշակութային գործունեության պրոբլեմների հետ: Տվյալ ոլորտի գիտության «կիրառական» անվանումը միանգամայն պարզ խոսում է նրա հատուկ ուղղվածության մասին: Կիրառական նշանակում է պրակտիկ նշանակություն ունեցող, որը կարող է գործառվել կյանքի որևէ մի ոլորտում: Օրինաչափ հարց է ծագում. որո՞նք են կիրառական մշակութաբանության ուսումնասիրության շրջանակները: Նմանատիպ հարցը, իսկ, ավելի ճիշտ, նրա պատասխանի որոնումն առաջադրում է կիրառական մշակութաբանության առանձնահատկությունների նկարագրության համար ուրվագիծ, որին էլ նվիրված է տվյալ հոդվածը:

Եվ այսպես, կիրառական մշակութաբանության հետազոտությունների ասպարեզում ընդգրկված են հասարակության մշակութային կյանքի կազմակերպումը և տեխնոլոգիան, մշակութային հիմնարկությունների, ժամանցի մշակութային կենտրոնների, սիրողական և ըստ հետաքրքրությունների համախմբող միավորումների գործունեությունը, փառատոնների, մասսայական հանդիսությունների, ֆորումների անցկացման մեթոդաբանությունը: Կիրառական մշակութաբանության գլխավոր ուղղությունը մշակութային քաղաքականության մշակումն ու հետազոտումն է, ինչպես նաև մշակութային ծրագրերի իրականացման տնտեսագիտական, քաղաքական և հոգևոր ապահովումը: Ավելին, կիրառական մշակութաբանությունն ուսումնասիրում է հասարակության հետաքրքրությունները, մշակույթին հաղորդակից դարձնելու եղանակները, ժամանցի կազմակերպման ձևերը: Գիտական վերլուծության և պրակտիկ ներազդեցության օբյեկտ են թատրոնների, կինոթատրոնների, թանգարանների, համերգասրահների և ցուցասրահների, մշակույթի պալատների, գրադարանների գործունեությունը, ստեղծագործական միությունների և ֆոնդերի լուսավորչական աշխատանքը: Ինչ խոսք, սոցիալական նշանակության օբյեկտների մշակութաբանական փորձաքննության անցկացումը, միջմշակութային հաղորդակցման զարգացումը որոշակիորեն ընդլայնում են տվյալ բնագավառի գիտության ոլորտը:

Այսօր ժամանակակից աշխարհը հզոր կարողությամբ տիրապետում է մշակույթին: Սակայն մարդկանց՝ գեղեցիկի աշխարհն ընդգրկելու և գեղեցիկի օրենքներով ապրելու ունակություն ու հմտություն ձևավորելու սոցիալական մեխանիզմի զարգացած չլինելու հետևանքով **բնակչության զգալի մասը չի կարող վերարտադրել համապատասխան արժեքային կողմնորոշումներ ու պահանջմունքներ դեպի մշակույթը**:

Այդ առումով կրթության և դաստիարակության համակարգի առաջնային խնդիրներից մեկն այն է, որ, **հենվելով մշակութաբանության ուսմունքի վրա՝ որպես մարդու վրա ներազդելու կոնստրուկտիվ միջոցի**, օգնի նրան հաղթահարել գոյություն ունեցող հակասությունները: Իսկ որպեսզի իրացվեն անհատի ստեղծագործական կարողությունները և դրանք համապատասխանեցվեն համաշխարհային հանրության օբյեկտիվ պահանջմունքներին և իրական հնարավորություններին, անհրաժեշտ է հաշվի առնել սկզբունքորեն կարևոր մի շարք գործոններ:

1. Անձի հոգևոր արժեհամակարգը հենվում է ընդհանուր կրթության վրա, խթանում է մշակութային արժեքների սպառումը և կենտրոնացվում է երաժշտական, թատերական, կերպարվեստի և արվեստի այլ ժանրերի լավագույն նմուշների վրա: Սակայն այսօր ոչ պակաս արդիական է **պրակտիկ կուլտուրայի** ունակությունների և հմտությունների ձևավորման գործընթացը:
2. Անցյալում կրթական համակարգում ամրագրված էր «ֆունկցիոնալ գրագիտություն» հասկացությունը, որն արտահայտում էր մարդու ընդունակությունը՝ հենակետային գիտելիքները կենսագործունեության բոլոր ոլորտներում կիրառելու համար: Այսօր ոչ պակաս արդիական է նաև «ֆունկցիոնալ մշակույթ» կատեգորիան, որի բովանդակությունը հետևյալն է. **անձը պետք է ոչ միայն յուրացնի որոշակի հենակետային մշակութաբանական գիտելիքների միագումարը, այլև արդյունավետորեն այն իրացնի պրոֆեսիոնալ-աշխատանքային, հասարակական-քաղաքական և հոգևոր ոլորտներում, ընտանիքում, կենցաղում, ժամանցում, մարդկանց հետ հաղորդակցվելիս** և այլն:
3. Հասարակությունը, զբաղվելով սոցիալ-մշակութային գործունեության կազմակերպմամբ, կոչված է հոգալ, որ ձևավորվող անձը յուրացնի արտադրվող պահանջների և նորմերի հանրագումարը, ընկալի այդ ժամանակամիջոցում աշխարհայացքային գիտելիքների կուտակված հիմքերը: Սոցիալ-մշակութային գործունեության բարդագույն խնդիրն է գտնել այն օպտիմալ հարաբերակցությունը **սոցիալ-մշակութային գիտելիքների նվազագույնի և անձի անհատական-ստեղծագործական գործունեության բովանդակության միջև**, որը պետք է յուրացնի ամեն մեկը՝ կապված իր ինքնակազմակերպման, իր կարողությունների և ընդունակությունների իրականացման պահանջմունքների բավարարման հետ:

4. Այսօր մշակույթի պրոբլեմներին վերաբերող բազմաթիվ հրապարակումներում հեղինակները, որպես կանոն, սահմանափակում են իրենց վերլուծությունը միայն բարձր արվեստի հետազոտությամբ: Մշակութային արժեքների ըմբռնման վերաբերյալ շատ տեղին է արտահայտվել մշակութաբան Ա.Ի.Արնոլդովը: Իր «Մշակութաբանության ներածություն» ուսումնական ձեռնարկում նշել է. «Մշակույթը՝ հասկանալու կուլտուրան, ոչ միայն նայելու, այլև տեսնելու, ոչ միայն ընկալելու, այլև մտածելու, ոչ միայն իմանալու, այլև ստեղծագործելու հմտությունն է»[2]: Ինչպես ընդգծվեց, մարդուն մշակույթի աշխարհ ներգրավելու գործընթացը ենթադրում է նաև **առօրեականության մշակույթը**՝ ընդգրկելով ամենալայն դիապազոնը՝ մարմնի կուլտուրան պահպանելու հմտությունից մինչև համաշխարհային արվեստում դրսևորվող նոր միտումների ըստ արժանվույն գնահատման ընդունակությունը:
5. Տվյալ դատողություններից կարող ենք եզրակացնել, որ «...առօրեականության մշակույթի ուսումնասիրման առարկա և տեսության հիմք են դառնում ո՛չ արդյունքները, ո՛չ համակարգը, որը նրանց բաշխում է, և ո՛չ էլ սպառողի համար ինֆորմացիան, այլ դրանց կոնկրետ յուրահատուկ օգտագործումը, սպառման անհատական գործողությունները, ստեղծագործությունը՝ ծագած սպառման գործողություններից»[3]:
6. Մշակույթի յուրացումն անմիջապես կախված է ուսումնական հաստատությունների կրթական-լուսավորչական գործունեության արդյունավետությունից, զանգվածային լրատվության միջոցների մշակութաբանական գործունեությունից: Մշակույթի յուրացման հարցում մեծ դեր են խաղում արվեստի հաստատությունները, գրադարանները, թանգարանները, կինոթատրոնները և այլ մշակութաժամանցային հաստատություններ: Սակայն տվյալ գործընթացում որոշիչ դեր է կատարում մարդու սեփական պատասխանատվությունը՝ ապահովելով մշակույթի արժեքների հետ իր նույնականացումը, իր անհատականության ինքնուրույն որոնումը, իր աճը մշակույթում, մշտական կատարելագործումը: Տվյալ խնդրի լուծումը ենթադրում է

[2] **Арнольдов А. И.** Введение в культурологию. М., 1993, стр. 47.

[3] **Шапинская Е.Н.** Культура повседневности в современных исследованиях.– Культурология: фундаментальные основания прикладных исследований, стр. 364.

կիրառական մշակութաբանության սկզբունքների լայն կիրառումը, որը որոշում է բարենպաստ մշակութային միջավայրի մեթոդաբանությունը և ձևավորում այն:

7. Ավելին, բացահայտում է մարդու ներգրավման օրինաչափությունները, սկզբունքները, միջոցները և մեթոդները դեպի մշակույթի աշխարհը, դեպի սոցիալ-մշակութային ստեղծագործությունը: Կիրառական մշակութաբանությունը, ցանկալի ուղղվածություն հաղորդելով անհատի հոգևոր ձգտումներին, կոչված է կողմնորոշելու նրան դեպի դարերով ձևավորված իդեալները:
8. Կիրառական մշակութաբանության առաջնային ոլորտներից մեկը կապված է հայրենի մշակույթի էկոլոգիայի, մշակութային միջավայրի պահպանման և հետագա զարգացման հետ, որը կրում է իր մեջ հոգևորի անկրկնելի հատկանիշներ: Կիրառական մշակութաբանությունը, էկոլոգիական լուսավորության միջոցներով բնակչության տարբեր խմբերին ներգրավելով սոցիալ-մշակութային գործունեության մեջ, կոչված է.

– մեզ հասցնել հայկական պատմամշակութային ժառանգության նշանակությունը, մասնավորապես պատմության և մշակույթի հուշարձանների, թանգարանների, հուշագոտիների անանց արժեքները՝ կապված հայրենի պատմության նշանակալից իրադարձությունների, գիտության և մշակույթի ականավոր գործիչների հետ,
– բնակչության բոլոր խավերում ձևավորել բնական միջավայրի **գեղագիտական ընկալումը**, նրա պահպանման ապահովման գիտակցված պահանջմունքը,
– լուսաբանել ժողովրդական ստեղծագործության ավանդույթների հարստությունը և բազմազանությունը՝ արթնացնելով աճող սերնդի հետաքրքրությունը դրանց նկատմամբ և դրանք յուրացնելու գիտակցությունը, ինչպես նաև տվյալ սոցիալ-մշակութային գործունեության ուղղությանը հաղորդել ժամանակակից երանգավորում,
– իրականացնել զանգվածային լրատվության, արվեստի, մշակութաժամանցային գործունեության միջոցներով լեզվահաղորդակցական կուլտուրայի շարունակական զարգացումը:

1. Մարդու ներգրավումը մշակույթի աշխարհ իրականացվում է հասարակության մեջ ձևավորված սոցիալականացման և դաստիարակության համակարգի միջոցով: Բայց անհրաժեշտ է հաշվի առնել, որ մշակութաբանական գոյացությունը կրում է վերառար-

կայական բնույթ: Նրա ծավալն ընդգրկում է հոգևոր և նյութական, վերառօրեական և առօրյա, ազգային և համամարդկային, ժամանակակից և քաղաքակրթության ակունքները տարածվող աշխատանքի կուլտուրայի, իմացության, հաղորդակցման, կենցաղի, ժամանցի ոլորտները: Հենց մշակութային գործընթացի բազմաշերտությունը և դիալեկտիկական բազմազանությունն են կանխորոշում նրանց արտացոլման բարդությունը կիրառական մշակութաբանության մեջ, որը կոչված է այդ հոգևոր հարստությունը հասցնել մարդուն: Հոգևոր աշխարհի զարգացման փիլիսոփայական հայեցակարգը, ինչպես ներկայումս արվեստի տարբեր ժանրերում տեղի ունեցող բարդ գործընթացները, շնորհիվ մատչելի, ոչ պրոֆեսիոնալ տեղեկատվական-լուսավորչական մեթոդիկայի, պետք է գիտակցվեն բնակչության տարբեր խավերի կողմից: Եվ դա, անշուշտ, կբարձրացնի **առօրեական մշակույթի գիտակցության մակարդակը**: Տվյալ մեթոդաբանությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն ուսուցիչների, սոցիալ-մշակութային ոլորտի ղեկավարների համար, որոնք կոչված են **լինելու պրոֆեսիոնալ միջնորդներ տեսական մշակութաբանության և մարդկանց կուլտուրայի աշխարհ ներգրավելու պրակտիկայի միջև**:

2. Կարելի է տարբեր կերպ վերաբերվել մասսայական մշակույթին: Բայց չպետք է մոռանալ, որ շնորհիվ զանգվածային լրատվության լեզվի պարզության և մատչելիության, այդ անդրազգային (տրանսնացիոնալ) երևույթները որոշակի չափով ելման կետեր են, որտեղից սկսվում է մարդու մուտքը դեպի մշակույթի աշխարհ: Եվ այդ առումով կիրառական մշակութաբանության առջև դրված է միասնական խնդիր.

– բոլոր միջոցներով ներազդել մշակութային ինֆորմացիայի որակական կատարելագործման վրա,
– որպես պլացդարմ՝ ապահովել հասարակության կողմից մասսայական կուլտուրայի ընկալումը, նշել՝ որտեղից պետք է սկսվի մարդկանց հոգևոր հետաքրքրությունների և պահանջմունքների համաչափ վեհացումը:

Այսինքն՝ մարդուն ներգրավելով մշակույթի աշխարհ՝ կիրառական մշակութաբանությունը կոչված է նրան ցույց տալու մշակութային երևույթների և գործընթացների ողջ բազմազանությունը:

Վերոհիշյալ գործոններից հստակ երևում է, որ այսօր հասարակական կյանքում որոշակիորեն աճում է մշակույթի սոցիալական դերը: Օգտագործելով մշակութաբանական արտահայտությունը՝ կարելի է ասել, որ մշակույթը «մարդու արտադրության» գործընթաց է, որ հանդես է գալիս իր ողջ ներդաշնակային ամբողջությամբ: Երբեք դեռ չի եղել, որ մշակույթը այդպես ակտիվ թափանցի հասարակական կյանքի մեջ, ինչպես այսօր: Այժմ, ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր մարդու պրոֆեսիոնալ պահանջին ավելանում է ևս մեկը. **մարդը պետք է լինի կուլտուրական**: Ոչ պակաս չափով դա վերաբերում է նաև **մարդու անձնային որակներին**: Դրա պատճառն այն է, որ մշակույթի ինտենսիվ զարգացումը դառնում է էլ ավելի կարևոր, իսկ նրա նվաճումները հասարակության սոցիալական առաջադիմության համար էական և անբաժանելի ցուցանիշներ են: Իրոք, այդ նվաճումները նշանակալի են և խոշորամասշտաբային: Աճել է մշակույթի ներազդեցությունը բոլոր կենսական գործընթացների վրա, լայնացել և հարստացել են նրա սոցիալական ֆունկցիաները, մեծացել է նրա ներազդեցության ուժը նոր մարդու ձևավորման գործընթացի վրա: Անշուշտ, մշակույթի ողջ սպեկտրը ակտիվորեն ազդում է մարդկանց աշխարհայացքի ձևավորման վրա, հարստացնում է նրանց հոգևոր աշխարհը: Հենց դրանից ելնելով՝ ներկայումս մշակութաբանության մեջ էլ ավելի մեծ պահանջ է զգացվում դիտելու և օգտագործելու հոգևոր մշակույթը՝ որպես ամբողջական և ինքնուրույն երևույթ, որը զբաղեցնում է իր հստակ ընդգծված տեղը կյանքում: Տվյալ երևույթի ուսումնասիրությունից անխուսափելիորեն ծագում են հարցեր. ի՞նչ է մտնում «հոգևոր մշակույթ» հասկացության մեջ, ինչպե՞ս է այն կախված սոցիալական կյանքի այլ ոլորտներից, ինչպե՞ս են մշակութային արժեքները ներազդում այդ ոլորտների վրա: Թվարկված հարցադրումները պահանջում են կոնկրետ պատասխան, առանց որի կդժվարանա առաջխաղացումը:

Իսկ որպեսզի տրվի ճիշտ պատասխան, ինչպես ամեն մի գիտության մեջ, այս պարագայում ևս անհրաժեշտ է հոգևոր մշակույթի պրոբլեմների շուրջ ծավալել ինչպես ընդհանուր, այնպես էլ **կիրառական ուսումնասիրություններ**: Այսօրվա դրությամբ առավել կարևոր են ընդհանուր հետազոտությունները, քանզի հնարավոր չէ լուծել առանձին պրոբլեմներ՝ չունենալով դրա համար տեսական հիմք:

Սկսենք նրանից, որ վերջին տարիներին լայն շրջանառության մեջ մտավ «հոգևոր մշակույթ» հասկացության երկակի մեկնաբանումը: Մի դեպքում խոսքը մշակույթի լայն, փիլիսոփայական հասկացության մասին է, որ

գործնականում ընդգրկում է հասարակության հոգևոր կենսագործունեության բոլոր կողմերը և մարդու ստեղծագործական ուժերի ինքնաիրացումը:

Բայց դրան զուգահեռ գոյություն ունի և հաստատուն արմատավորվել է հոգևոր մշակույթի նեղպրոֆեսիոնալ մեկնաբանումը՝ որպես հոգևոր կյանքի մի շարք ոլորտներից մեկը: Մենք կողմնակից ենք հոգևոր մշակույթի լայն հասկացությանը առաջին հերթին այն բանի համար, որ միայն նա է լիարժեք նպաստում մշակութային քաղաքականության խնդիրների հաջող լուծմանը, նոր մարդու ձևավորմանը:

Այդ նկատի ունենալով՝ հոգևոր մշակույթը կարելի է տեսականորեն պատկերացնել որպես մի ամբողջականություն, որի բնագավառներն ակտիվորեն փոխհամագործակցում են (գեղարվեստական և գեղագիտական մշակույթ, կենցաղային մշակույթ, հաղորդակցման մշակույթ և այլն):

Մշակութային ժամանակակից փուլի կառուցման համար, մեր կարծիքով, կարելի է ընդգծել հոգևոր մշակույթի մի շարք սկզբունքային նորմատիվ դրույթներ:

Առաջինը հասարակության բոլոր անդամներին մշակութային արժեքներին շփման հավասար հնարավորությունների ապահովումն է: Դա հատկապես կարևոր է այսօր, երբ **մարդկանց առօրյա կենսագործունեության որակը և նրանց հոգևոր կատարելագործումը կախված են նրանց՝ դեպի մշակութային արժեքները հաղորդակից լինելու ցանկությունից**:

Երկրորդ՝ մշակույթը, ուղղված լինելով նոր մարդու ձևավորմանը, ապահովում է մարդկանց ոչ միայն կենսագործունեության պայմանների կատարելագործումը, այլև հենց **անձի կատարելագործումը**: Հատկապես սրա հիման վրա է իրականացվում մարդու հոգևոր աշխարհի մշտական և անխափան էվոլյուցիան:

Երրորդ՝ մշակույթը, մշտապես հարստացնելով անձի հոգևոր աշխարհը, նպաստում է մարդու կողմից հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մշակութային հմտությունների ակտիվ տիրապետմանը: Խոսքը հենց մշակութային հմտությունների մասին է, դաստիարակության մասին, այլ ոչ միայն կրթության:

Ուստի կարևոր հիմնախնդիրներից մեկը, որը այսօր դրված է մշակութաբանների առջև, այն է՝ **դուրս բերել մշակույթի տեսությունը դեպի պրակտիկա**:

Բոլորս էլ գիտենք, որ դեռևս գոյություն ունի որոշակի խզում հասարակության մշակութային զարգացման տեսության և մշակութային հաստատությունների պրակտիկ գործունեության միջև: Տեսական ուսումնասիրություն-

ներից դեպի պրակտիկա դուրս գալն անմիջականորեն կապված է **ժողովրդի մշակութային դաստիարակության կատարելագործման համակարգի հետ**, որը, ինչ խոսք, կիրառական մշակութաբանության կարևորագույն խնդիրն է: Լինելով անձի կայացման գործընթացի վրա ներազդելու հզոր միջոց՝ կիրառական մշակութաբանությունը պետք է խթանի մարդկանց ստեղծագործական հնարավորությունները, որոնց իրականացումը կբացի լայնարձակ տարածություն հասարակության հոգևոր կարողության հարստացման համար:

Այստեղից էլ, ըստ Ա. Ի. Արնոլդովի բնորոշման, «...մարդու բնահատուկ որակը, նրա նորմալ վիճակը կուլտուրականությունն է, բարձրագույն հոգևոր արժեքների տիրապետումը: Նրա հակաբնական, աննորմալ վիճակն են հոգևոր պրիմիտիվիզմը և ինտելեկտուալ խղճուկությունը, բարոյական կոռոզիան և հոգեկան աղքատությունը»[4]:

Իհարկե, ժամանակակից դինամիկ և բազմիմաստ աշխարհում մշակույթին տիրապետելը բարդ և դժվարին գործընթաց է: Ժամանակակից մշակույթի մեջ ազատ և անկաշկանդ ապրելու համար մարդը դեռ մանկական տարիքից պետք է կողմնորոշվի նրա մեջ, ընտրի իր անձնական հակումներին համապատասխան արժեքներ: Եվ չնայած մշակութային արժեքների ընկալման ընդունակությունը մարդկային կյանքի ունիվերսալ հատկություն է, միևնույն է, այն անհրաժեշտ է հատուկ զարգացնել: **Քիչ է ցանկանալ գեղեցիկը, պետք է կարողանալ հասկանալ այն**: Ահա թե ինչու են մշակույթի համամարդկային արժեքներ համարվում հոգևոր ինքնակատարելագործումը, կյանքի իմաստի որոնումը, մարդու ձգտումը՝ հասկանալու իր տեղը և դերը հասարակության մեջ: Տեղին է հիշել Մարքսի խոսքերը. «Մարդիկ ոչ միայն դերասաններ են, այլև իրենց սեփական դրամայի հեղինակները»:

Պրակտիկան համոզիչ կերպով ցույց տվեց, որ սոցիալ-մշակութային գործունեության բուն զարգացման համար հոգևոր կյանքի բոլոր ձևերին ազատություն տալու փաստը ակնհայտորեն բավական չէ: Ի լրումն ազատության՝ անհրաժեշտ է **սոցիալապես կողմնորոշված մշակութային քաղաքականություն**, որ կոչված լինի գոնե նվազագույնը ապահովելու.

- սոցիալական և գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին համապատասխան մշակութային գործունեության ինֆրակառուցվածքի ստեղծումը,
- կադրերի պատրաստումը, որոնք ընդունակ կլինեն գլխավորելու մշակութային արժեքների յուրացման, պահպանման, տարածման և հե-

[4] **Арнольдов А.И.** Культура: теория и жизнь, М., 1984, стр. 58.

տագա հարստացման գործընթացը: Իսկ ամենակարևորը՝ բնակչության բոլոր խմբերի մեջ, և առաջին հերթին երիտասարդության, ձևավորել բարձր հոգևոր-գեղագիտական պահանջմունքներ և այն արդյունավետ բավարարելու միջոցներ:

Այդ խնդիրների լուծումը կոչված է իրականացնելու մշակութաբանության բնագավառներից մեկը՝ **կիրառական մշակութաբանությունը**, որը բացահայտում է մշակույթի բարոյաէսթետիկական կարողության իրականացման մեխանիզմը, հիմնավորում է մարդկանց սոցիալ-մշակութային ստեղծագործական տարբեր ձևերի մեջ ընդգրկման մեթոդաբանությունը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը, կարող ենք եզրակացնել, որ կիրառական մշակութաբանությունն արդի ժամանակաշրջանի ծնունդն է, մշակույթի՝ որպես հոգևոր կյանքի ինտեգրալ երևույթի և սոցիալ-մշակութային գործունեության մեջ ընդգրկված կոնկրետ մարդու միջև գոյություն ունեցող կամուրջն է: Եթե պետությունը և հասարակությունը, իսկ առավել չափով մանկավարժության տեսաբանները և պրակտիկները դա կգիտակցեն, ապա այն կամրապնդվի անձի ստեղծագործական կարողության առավելագույն զարգացման նոր մեթոդների իրականացման, նրա ինքնակայացման, անհատական ընդունակությունների և ձիրքի խթանման միջոցով: Տեսական (ֆունդամենտալ) և կիրառական մշակութաբանության զարգացումը հնարավորություն է տալիս մշակույթի ոլորտում նոր որակական մակարդակի վրա բարձրացնելու կրթական համակարգը: Մշակութաբանական կրթության որակապես նոր համակարգի առավելությունն այն է, որ նրա հիմքում ընկած են մշակույթի տեսությունը և պատմությունը, փիլիսոփայությունը, սոցիոլոգիան, տնտեսագիտությունը, մշակույթի իրավական նորմերը, անձի, ընտանիքի, աշխատանքի, հասարակական կյանքի, կենցաղի, ժամանցի մշակութաբանությունը, ինչպես նաև ֆունդամենտալ և կիրառական մշակութաբանության այլ բաղադրամասեր: Նրանց վրա հենվելն օգնում է խորապես իմաստավորել հոգևոր կյանքի էությունը և առանձնահատկությունը, մշակույթի բնությունը և ֆունկցիաները, բացահայտել ազգային մշակույթի յուրահատկությունը և համամարդկային հիմքերը, պահպանել և հարստացնել ժողովրդական ստեղծագործության նվաճումները, **ներմուծել գեղագիտական նախահիմքը առօրյա կենսագործունեության մեջ**:

Մենք հուսով ենք, որ հոդվածում առաջարկված մոդելները և հետազոտությունները պահանջելի կլինեն ոչ միայն մասնագետների, մշակութաբանների կողմից, այլև պրակտիկների՝ ամենատարբեր բնագավառներում (կառավարման, հաղորդակցական, կրթական և այլն) կիրառելու համար, ինչպես

նաև նրանց կողմից, ովքեր մեր՝ տեխնոլոգիապես առաջ մղվող հասարակության մեջ ձգտում են իրենց պրոֆեսիոնալ գործունեությունը մտապատկերել որպես **մշակույթով պայմանավորված** և **մշակույթին համապատասխան** գործունեություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է մշակութաբանական գիտության բաղկացուցիչ մասերից մեկի՝ կիրառական մշակութաբանության վերլուծությանը: Աշխատության մեջ ուսումնասիրվում են կիրառական մշակութաբանության կարգավիճակի, բովանդակության հարցերը, մշակութաբանական գիտության ֆունդամենտալ-տեսական և նրա կիրառական վեկտորի զարգացման և օգտագործման կապակցման բնույթը, մի շարք սկզբունքորեն կարևոր գործոններ անձի ստեղծագործական կարողությունների իրացման հարցում, գործունեության տարբեր բնագավառներում իրական սոցիալ-մշակութային պրոբլեմների լուծման հարցում կիրառական մշակութաբանության վրա հենվելը կօգնի խորապես իմաստավորել հոգևոր կյանքի էությունը և առանձնահատկությունը, ներմուծել գեղագիտական նախահիմքը առօրյա կենսագործունեության ոլորտ:

Բանալի բառեր - կիրառական մշակութաբանություն, առօրեականության մշակույթ, գեղագիտական ընկալում, մարդու անձնական որակ, անձի հոգևոր ձևավորում, անձի հոգևոր կատարելագործում, մշակույթով պայմանավորված, մշակույթին համապատասխան:

ПРИКЛАДНАЯ КУЛЬТУРОЛОГИЯ И ДУХОВНОЕ ФОРМИРОВАНИЕ ЛИЧНОСТИ

КАРЕН КАЗАРЯН

Статья посвящена анализу одной из составных частей культурологического знания - прикладной культурологии. В работе рассматриваются вопросы статуса, содержания прикладной культурологии, характер сопряжения фундаментально-теоретического культурологического знания и прикладного вектора его развития и использования; ряд принципиально важных факторов для реализации творческих дарований личности; возможности прикладной культурологии для решения реальных социокультурных проблем в различных областях деятельности. Опора на прикладную культурологию поможет глубже осмыслить сущность и специфику духовной жизни, внести эстетические начала в повседневную жизнедеятельность.

Ключевые слова - прикладная культурология, культура повседневности, эстетическое восприятие, личное качество человека, духовное совершенство личности, культурообусловленность, культуросообразный.

APPLIED CULTUROGRAPHY & SPIRITUAL FORMATION OF PERSONALITY

KAREN GHAZARYAN

This article is dedicated to the analysis of one of the constituent parts of culturography where questions concerning the status and the subject-matter of the applied culturography are considered. The fundamental-theoretical issues of applied culturography and the essence of relating the development of its application compass to the nature of its utilization are considered as well. The reliance on applied culturography would help exploit the creative aptitude of individuals in a number of essentially important details, solve real socio-cultural problems in different spheres of activities, and also appraise profoundly the essence and distinctive characteristics of spiritual life and introduce the cornerstone of aesthetics into the arena of everyday activities.

Key words - applied culturography, Everyday culture, aesthetic perception, personal qualities of humans, spiritual formation of a person, spiritual perfection of an individual, culturally conditioned, congruous with culture.